ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» _____ 2019թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ
ՄԱՆԱՆԴՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.34 ՇԵՆՔԻ Հ.52/1 ԲՆԱԿԱՐԱՆՆ
ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով, Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի հ. 41-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1.Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Մանանդյան փողոցի հ.34 շենքի հ.52/1՝ 30քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 26.01.2017թ. N26012017-01-0003 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Նելլի Հակոբյանին և Դիանա Գաբրիելյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՄԱՆԱՆԴՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.34 ՇԵՆՔԻ Հ. 52/1 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նախագծով առաջարկվում է Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Շենգավիթ վարչական շրջան՝ Մանանդյան փողոցի հ.34 շենքի հ.52/1՝30.0քմ ընդհանուր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով, անհատույց օտարել (նվիրել) Նելլի Հակոբյանին և Դիանա Գաբրիելյանին:

Մանանդյան փողոցի հ.34 շենքի հ.52/1՝30քմ մակերեսով բնակարանը, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 26.01.2017թ. N26012017-01-0003 վկայականի, տվյալների հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Երևանի քաղաքապետարանի 1998 թվականի հունվարի 22-ի ծառայողական հ.000607 օրդերի համաձայն՝ Մանանդյան փողոցի հ.34 շենքի հ.52/1 հասցեում 30.0քմ մակերեսով բնակարանը հատկացվել է ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարությանը: Քննարկվող բնակարանը նախարարության անվամբ իրավունքի գրանցում չի ստացել և ՀՀ կառավարության 29.05.2009թ. հ.604-Ն որոշման հիման վրա բնակարանի նկատմամբ գրանցվել է Երևան համայնքի սեփականության իրավունքը:

Նելլի Հակոբյանը և Դիանա Գաբրիելյանը համատեղ 1993 թվականից բնակվում են Մանանդյան փողոցի հ.34 շենքի հ.52/1 հասցեում գտնվող բնակարանում /հիմք՝ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի «Գավառ» համատիրության կառավարչի կողմից հաստատված 19.08.2019թ. հայտարարություն/ և համաձայն բնակչության պետական ռեգիստրի հաշվառման մասին տրված 17.08.2019թ. N22/1-4048 տեղեկանքի՝ Նելլի Հակոբյանը և Դիանա Գաբրիելյանը 2016 թվականից հաշվառված են վերը նշված հասցեում: Քննարկվող բնակարանը տևական ժամանակ փաստացի օգտագործվում է վերոնշյալ անձանց կողմից, սակայն իրավահաստատող փաստաթղթերի բացակայության պատճառով վերջիններս հնարավորություն չեն ունեցել այն սեփականաշնորհել:

ՀՀ մշակույթի նախարարությունը 18.09.2018թ. հ.01/7.1/6458-18 գրությամբ չի առարկել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարգավորելու քննարկվող բնակարանը Նելլի Հակոբյանին սեփականության իրավունքով տրամադրելու հարցը:

ՀՀ կադաստրի կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի ստորաբաժանման 19.09.2019թ. NԱՏ-19092019-99-0095 տեղեկանքի համաձայն՝ Նելլի Հակոբյանի և Դիանա Գաբրիելյանի անուններով ՀՀ-ում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, վերջին հինգ տարիների ընթացքում վերջիններիս կողմից անշարժ գույքի նկատմամբ ձեռքբերման կամ օտարման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում կատարված չէ:

Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի հ.41-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ Ծրագրի 4-րդ կետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի 2018 թվականի դեկտեմբերի 25-ի հ. 41-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ փաստական հանգամանքները, ուստի վերոհիշյալ ընտանիքի անդամների սեփականության իրավունքը տարիներ շարունակ զբաղեցրած բնակարանի նկատմամբ ձևակերպելու համար անհրաժեշտություն է առաջացել ընդունելու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՄԱՆԱՆԴՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.34 ՇԵՆՔԻ Հ.52/1 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող Մանանդյան փողոցի հ.34 շենքի հ.52/1 բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չկա:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՄԱՆԱՆԴՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.34 ՇԵՆՔԻ Հ.52/1 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող Մանանդյան փողոցի հ.34 շենքի հ.52/1 բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ